Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02 մայիսի 2018թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Տ. Ղուկասյան / գնահատող /
	Շ. Իսախանյան /գնահատող/
	Ս. Զաքոյան / բացող /
	Գ. Խաչատրյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Հարությունյան

1. ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների շտկման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնման ընթացակարգի 1-12 և 24-27 չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին 26.04.2018 թ. ծանուցվել է հավելված 6.1-ում առկա անհամապատասխանության վերաբերյալ: Վերջինիս կողմից սահմանված ժակետում շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ.

- Կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ.

- Յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ. Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել.

չափաբաժին 1-12 և 24-27 - <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին,

չափաբաժին 13-17 և 21 - <<Նորմա-Պլյուս>> ՍՊԸ-ին,

չափաբաժին 19 - <<Պրոֆիլայն էռ էմ>> ՍՊԸ-ին,

չափաբաժին 22 - <<Էն Գրուպ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ. Բաղինյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել արձանագրության 3.1 կետում նշված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Բաղինյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ.Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ.Ղուկասյան

---------- Շ.Իսախանյան

---------- Ս.Զաքոյան

---------- Գ.Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան